



Հեղինակը չունենալով վիպասանի համար անհրաժեշտ զեղարուեստական չափը—ձանձրացնում է ընթերցողին: Հեղինակը աւելի պատկերահասն է: քան նկարիչ: այդ պատճառով էլ՝ բնութեան նկարագրութիւնները շատ թոյլ են. նա փորձառու հոգեբան էլ չէ: որովհետեւ Յարութիւնի պէս մարդը իւր տանը մարդ չի սպանի: Այդուհանդերձ աւելի զաւառական է: քան զբանական: և զաւառականը աւելի կենդանի է և նկարչական քան զբանականը: որ շինծու: հնարովի ոճեր ունի: Այժմ է այդ պէպեր կիսով չափ փոքր լինէր: այսինքն գուրս ձգուէին աւելորդաբանութիւնները և նկարագրութիւնները և դիր պակասէր մինչև 10 կոպէկ—այն ժամանակը այդ դրուածքը աւելի կը զեղեցիկանար և աւելի օգտակար կը լինէր: որովհետեւ իրրեւէժան զիրք աւելի շատ կը տարածուէր զիւղացիների մէջ: Այս հէնց դրանց համար էլ մեր կարծիքով զրուած է այդ պատկերը: որտեղ տէնդէնցիան: գաղափարը աւելի մեծ դեր է կատարում: քան թէ զեղարուեստական օրնէքները: Հեղինակը ուղղակի իրրեւ հրապարակախօս բաց է անում վարագոյրը և ցոյց է տալիս մեզ մեր զիւղերի մութ անկիւնները: իր տեսակի « ВЛАСТЬ ТЬМЫ »: Աւելորդ չէ մեզ էլ ժամանակ առ ժամանակ ծանօթանալ մեր զիւղական կեանքի երևոյթներին: չարն ու բարին: որ հասկանանք այն ճշմարտութիւնը: որ դեռ մթին խաւարի մէջ է մեր ժողովուրդը: որ դեռ կենդանական բնագրումներով է զեկավարուում զիւղացին իր առօրեայ կեանքի մէջ: որ մենք որքան էլ ուսում ու լուսաւորութիւն տարածենք այդ մութ անկիւններում: էլի քիչ է: էլի բաւական չէ տիրող խաւարը փարատելու համար:

Ֆիլի:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:

ԵՐԳԻ ՂԻՃՈՎ ՀՆԳՈՆՆՈՅՑ

Ըստ խնդրանաց Արարատի խմբագրութեան հետեւալ ծանօթութիւններն գրուած են Հեղինակի կարծառե այցելութեան միջոցին ի Ս. Էջմիածին: Երբ նա ստուգագոյն գրաւոր աղբիւրներից հեռու՝ բողոքովին իւր յիշողութեան վտահելու պարտաւորուած էր: Միևնոյն ժամանակ Հնդկահայոց արդի վիճակն այնպիսի բաղմակողմանի հանգամանքներ չունի որ այսպիսի ծանօթութիւններ խմբագրելու գործն առանց գրաւոր աղբիւրների կարի յոյժ դժուարացնէ. մանաւանդ որ երկարամեայ պանդխտութեամբ ի Հնդկիկ՝ Հեղինակն կարողացել է իւր հայրենակցաց արդի վիճակն այդ հեռուոր երկրում՝ ըստ բաւականին ուսումնասիրել: Այս ծանօթութեանց հետ կը գտնուին նաև Ջաւայի և Բիրմանստանի աղգայնոց արդի վիճակի նկարագրութիւնը: քանզի սոքա ևս նոյն ծագումն ունին: նոյն պարագայից մէջ են ապրում որպէս Հնդկահայք: և շատ բաներում իրարից աննջատ են:

1. Ամբողջ Հնդկաստանի, Բիրմանստանի և Ջաւայի Հայոց թիւն չի կարող աւելի քան երեք հարիւր ընտանիք լինել: Բաժանումն մտաւորապէս այսպէս կը լինի. —

| | | |
|---------------------------------|-------------|-----------|
| Պալկաթա | (Հնդկաստան) | 100 տուն. |
| Մադրաս | « » | 25 » |
| Բուժբայի | « » | 5 » |
| Դաքա | « » | 20 » |
| Ռանդուն Պինանդ և Մանդլէ (Բիրմ.) | | 100 » |
| Սինգապուռ Բաթալիա) | Ջաւա | 50 » |
| Սուրբայիա և կղզիք) | | |
| Համագումար | | 300 տուն. |

2. ԵՎԵՂԵՑԻԷ. — Եւրոպացւոց ի Հնդկիկս մուտք գործելուց շատ յառաջ անհատ պարսկահայ վաճառականք և արուեստաւորք Բէլուչիստանի և Աւղանիստանի ծանապարհաւն Հնդկաստան կայցելէին և ոմանք իսկ Հնդկական և Մոզոլ արքունեաց մէջ ծանօթ էին իւրեանց առևտրական և արուեստագիտական հմտութեամբն: Սակայն զաղթականութիւն ու ժողովուրդ հաստատելն և ընդ նմին եկեղեցիք ու քահանայ ունենալն ոչ աւելի քան հա-

րիւր յիսուն կամ հարիւր վաթսուն տարւով յառաջ սկսուի երբ արդէն կաթողիկ քարողիչներ սկսած էին քարոզութեան նպատակաւ հաստատուել այլ և այլ գաւառներում, և մի քանի եկեղեցիք ևս արդէն շինել էին:

Ա. Այս միջոցներին էր որ Զիչրայ կամ Զինսուրայ քաղաքի հայ գաղթականք առաջին հայկական (Հնդկաստանի երրորդ կամ չորրորդ քրիստոնեայ) եկեղեցին կառուցին, Զիչրայի Ս. Յովհաննու եկեղեցին (զկնի Վալկաթայի Ս. Նաղարեթայ եկեղեցւոյ) Հնդկաստանի ամենէն մեծն և նշանաւորն է:

Նոյն քաղաքի հայ գաղթականութիւնն ևս անուանի էր իւր ճոխութեամբ ու հարստութեամբն, Այլ ցաւալի է որ ժամանակի փոփոխութիւնք այնտեղի հայ գաղթականութիւնն քնայինք են արել, և եկեղեցին որ մի հայ պահպանի խնամոցն է յանձնուած տարին միայն մէկ անգամ կը բացուի Ս. Յովհաննու տօնախմբութիւնն կատարելու համար, և այս առթիւ սովորաբար բազմաթիւ հայեր և մի քանի քահանայք Վալկաթայէն երկաթուղւով կը գան Ս. Պատարագին ներկայ գտնուելու և միանգամայն մի տեսակ ազգային հանգէս կատարելու համար՝ զկնի Պատարագի միասին ծաշ վայելելով: Ընորհիւ Զինսուրայի հանգուցեալ հայ բարեպաշտից Ս. Յովհաննու եկեղեցին բաւական հարստութիւն ունի որ ներկայ Վալկաթայի եկեղեցւոյ հոգաբարձուաց մատակարարութեան ներքոյ է գտնուում: որով կարելի է լինում եկեղեցին իւր անգործածելի վիճակում իսկ միշտ նորոգուած պահել:

Նորա ուելորդ եկամուտն սովորաբար խառնում է Վալկաթայի եկեղեցւոյ եկամտի հետ, Զիչրայի Ս. Յովհաննէս եկեղեցին Հնդկահայոց համար միանգամայն մի ուխտատեղի է և երբեմնապէս մօտակայ քաղաքներից հայք և օտարազգի քրիստոնեայք կը գան ուխտ կը կատարեն:

Բ. Վալկաթայի Ս. Նաղարեթայ եկեղեցին Հնդկաստանի այժմեան հայ եկեղեցական հաստատութեանց ամենէն կարեւորն է: Վալկաթա իրբև մայրաքաղաք Հնդկաստանի և իւր աշխարհպրական գրից պատճառաւ Ասիոյ ամենահարուստ վաճառաշահ քաղաքներից մինն է համարելի: Ամէն օր կը տեսնուի Գանգէս գետի վերայ Վալկաթայի յանդիման հարիւրաւոր շողնաւեր և առագաստաւորք որ աշխարհիս ամէն ծայրերից եկած՝ ապրանք են բերել կամ ապրանք են տանում: Մի այսպիսի առևտրական կենդրոնում յայտնի է որ ի Հնդկիս գաղթեալ հայեր ամենից աւելի կը հաւաքուէին: և իւրեանց ազգային քնածին զգացմանց հետևելով իւրեանց ճոխութեան վայել ազգային եկեղեցի կրկառուցանէին, Հե-

տեաաար Ս. Նաղարեթ ամենից մեծ ու գեղեցիկ և միանգամայն ամենից հարուստ հայ եկեղեցին է Հնդկաստանի մէջ: Եկեղեցւոյ Սեղանն ու ամբողջ յատակն ընտիր մարմարիտն քարով ծածկուած է և լաւ շինուած գեղեցիկ աթոռներ ու նստարաններ շարուած են եկեղեցւոյ մէջ ծայրէ ի ծայր: Վալկաթայի Հայոց գերեզմանատան մէջ ևս կը գտնուի մի մատուռ ուր հոգեհանգիստ կը կատարուի: և քաղաքի եկեղեցւոյ տարեկան նորոգութեան միջոցին նաև ժամերգութիւն ու Պատարագ տեղի կունենայ:

Գ. Մազրաս ունի մի բաւական մեծ եկեղեցի: Այն ժամանակներում երբ Վալկաթա իւր ներկայեան քաղաքական ու առևտրական մեծ դիրքը գեոչէր ստացած, Մազրաս մի աւելի կարևոր քաղաք էր համարուում և այնտեղի հայք աւելի ճոխ և բազմաթիւ էին քան թէ հիմա: Զիարդ և իցէ Մազրասայ որպէս և Հնդկաստանի բոլոր միւս եկեղեցեաց հայ ժողովուրդներն՝ իւրեանց եկեղեցին հաստատուն պահելու և ապագայն նիւթականապէս ապահովացնելու հնաատեալութիւնն ունեցել են. և այսօր Մազրասայ քսանուհինգ տուն ըստ մեծի մասին աղքատ հայերն կարող են շնորհիւ իւրեանց բարեպաշտ նախնեաց կտակաց առանձին քահանայ և եկեղեցւոյ պաշտօնեաներ ունենալ:

Դ. Դաքայի եկեղեցին Նոյնպէս Հնդկահայոց ճոխ ժամանակի յիշատակն է: Երևելի և ազգասէր հայ կալուածատէրներ և վաճառականներ այստեղ հաստատուած էին և այստեղ կը պաշտէին իւրեանց հայրենի կրօնն: մինչև ժամանակի փոփոխութիւնք նորանց զաւակներին թէ իւրեանց ճոխութիւններինցն մերկացրեց և թէ իւրեանց ազգային եկեղեցւոց հեռացրեց: Դաքայի եկեղեցւոյ մեծութեանը նայելով շինութեան միջոցին այդ քաղաքի հայազգի ընտանեաց թիւն չէր կարող հարիւրից պակաս լինել: Ներկայեան իրբու երեսուն տուն ըստ մեծի մասին աղքատ ժողովուրդն չպիտի կարողանար առանձին քահանայ և ժամասացութիւն ունենալ, եթէ եկեղեցւոյ ի Տնուց մնացած կալուածներն քահանայի և պաշտօնէից նիւթական պէտքերըն չմատակարարէին:

Ե. Բումբայի ևս մի փոքրիկ եկեղեցի ունի և բաւական կալուածներ ու դրամ: որով կարողանում է առանձին քահանայ պահել, և կտակեալ գումարների տոկոսներինցն աղքատներին ևս բաժին հասցընել: Այնտեղ ամէն կիւրակի օր Ս. Պատարագ կը մատուցուի կամ պարզ առևտուեան ժամերգութիւն կը լինի:

Զ. Բումբայու մօտ Սուրաթ՝ քաղաքն կը գլտ-

նուի որ յառաջ ժամանակ մի նշանաւոր վաճառա-
 շահ կեդրոն էր և առևտուրն ու երթևեկութիւն
 կը լինէին մօտիցն անցնող մի մեծ գետով որ Հնդկաց
 ովկիանոսի հետ հաղորդակցութիւն ունէր: Իբրու
 քառասուն տարւով յառաջ այդ գետն յանկարծ ցա-
 մաքեցաւ և այդ պատճառաւ քաղաքի առևտուրն բո-
 լորովին գաղարեց և բնակչաց շատերն ցրուեցան: Ինչ-
 պէս շատ ուրիշ քաղաքներում նոյնպէս և այստեղ
 բազմութիւն Զուղայեցի վաճառականք հաստատուել և
 հարստացել էին: և իւրեանց հարստութեան և ճո-
 խութեան վայել տներ և եկեղեցի էին շինել: Բայց
 գետի ցամաքման ընդհանուր արկածիցն յետ հայերն
 ևս միւսների պէս գաղթեցին ուրիշ տեղեր: Այսօր
 Սուրաթայ մէջ կը գտնուի միայն մի հայ—հնդիկ
 ընտանիք որոյ մեծն մի քանի բառ աղճատեալ հա-
 յերէն խօսել գիտէ: Հայոց անցեալ յիշատակն է
 իւրեանց եկեղեցին: որ աւաճ տան տարւով յառաջ
 կրրէ բամբակի շտեմարան էր գործ ածուում և մի
 կրակակապառի իշխանութեան տակ էր: Եկեղեցին ունի
 նաև ընդարձակ բնակարաններ քահանայից և թերևս
 զպրոցի համար: Այս նաև մի գերեզմանատուն: որոյ
 մէջ կը գտնուի մի փոքրիկ մատուռ: Եկեղեցւոյ
 մօտակայ փողոցներում կը գտնուին բազմութիւ տը-
 ներ որոց ճակատին կը տեսնուին այս նշանն :
 Այժմ այս տներն ըստ մեծի մասին կիսաւեր դրու-
 թեան մէջ են: Իսկ աւելի լաւերն շինին գնեցող
 այնտեղի կրակակապառ ընկերներն վարձու տրուած
 են:

Ե. Մազրաս ունի նաև մի բաւական մեծ ե-
 կեղեցի և ժամատուն: նոյնպէս յիշատակ Հնդկաս-
 տանի Հայոց անցեալ փառաց: Ար յիշուի որ մի
 ժամանակ Մազրաս կեդրոն էր Հնդկահայոց մտաւոր
 կեանքի: այստեղ տպարան կար և Հայոց առաջին
 լրագիրն « Ազգարար » այստեղ կը հրատարակուէր:
 նոյնպէս բազմութիւ պիտանի գրքեր հրատարակուած
 են անդ ի հնումն: Սակայն այդ մտաւոր կենաց նը-
 շոյն անգամ չի երևում ներկայումս: մի քանի
 տուն աղքատիկ և կիսացեղ հայեր որ եկեղեցուց
 ստացած նիւթական օգնութեան պատճառաւ պար-
 տաւորուած են հայ լինելնին չուրանալ: այլ լեզուաւ
 ու զգացմամբ բողոքովն օտարացած են: Մի հայ
 զպրոց կառավարելու համար ևս մի կտակ կայ: այլ
 որովհետև հայերէնի փափագող չկայ և որովհետև
 կտակի դորութեամբն ուրիշ տեղ կամ ուրիշ բանի
 չի կարող ծառայել այդ գումարն՝ կտակն կը մնայ
 այնտեղ ուր որ կտակակատարն թողել է իւր մեռ-
 նելէն յառաջ: Ընորհիւ նախկին բարեպաշտ Մազ-
 րասարնակ Հայոց՝ քահանայի և եկեղեցւոյ պաշտա-
 մանց ծախքեր լիովին ապահովուած են և ամէն կիւ-
 բակէ և սուրբ օր Պատարագ կը մատուցուի:

Ը. Սէրգաբազ ևս ունի մի հայկական եկեղեցի
 և կալուածներ: այլ ոչ հայ ժողովուրդ ունի և ոչ
 եկեցական պաշտօն կը կատարուի այնտեղ: Եկեղեց-
 ւոյ զգեստք և անօթք շատ տարիներով յառաջ
 յուզարկուեցան Պալիսթայի Հայոց եկեղեցին:

Մի ժամանակ գիտաւորութիւն կար: այդ որ-
 պէս և Սուրաթայ եկեղեցիքն հանդերձ իւրեանց
 կալուածներովն վաճառել: բայց մինչև հիմա այն-
 պէս մնացած են:

Թ. Բիրմանստանի Ռանգուն քաղաքի մէջ կը
 գտնուի մի եկեղեցի: որ համեմատարար նոր ժամա-
 նակուայ շինութիւն է: և նոյն քաղաքի հայ գաղ-
 թականութիւնն ևս համեմատարար նոր է: Մի քա-
 հանայ կը պահէ և կանոնաւոր ժամասացութիւն կը
 կատարուի այնտեղ:

Ժ. Մանդլէ ևս ունի մի մատուռ և երբեմն
 առանձին քահանայ կը պահէր: այլ հայ գաղթա-
 կանութիւնն շատ նուազ լինելով ներկայիս այլ ևս
 քահանայ չկայ այնտեղ:

ԺԱ. Սինգափուռ ևս նոր ժամանակուայ գաղ-
 թականութեանց կը պատկանի: ունի մի եկեղեցի և
 առանձին քահանայ կը պահէ:

ԺԲ. Բաթաիա Զաւայի ամենէն նշանաւոր
 հայ գաղթականութիւնն կը համարուի: Բաւական
 յառաջագէտ են այնտեղի հայեր և ընդհանրապէս
 աւելի հարուստ և առատաձեռն են համարուում
 քան թէ Հնդկահայք: Ունին մի եկեղեցի և փոքրիկ
 դպրոց: Բաթաիա է կեդրոն Հայկեան Հայրենասի-
 բական ընկերութեան որ այնքան մեծամեծ բարիք-
 ներ արած է ազգային այլ և այլ հաստատութեանց
 որպէս և անհատներ:

ԺԳ. Սուրբայիա ևս ունի մի փոքրիկ եկեղեցի
 և առանձին քահանայ:

ԺԴ. Այս կարգի հետ յարմար եմ համա-
 րում յիշատակել Աֆղանստանի մայրաքաղաքում
 Քարօլում գտնուած մի հին եկեղեցի որ Հնդ-
 կաստանի թեմին կը պատկանի: Շատ քիչերի ծա-
 նօթ կըլինի որ Քարօլի մէջ կը գտնուին մեծ տան
 տուն հայեր որք առևտուրով և զինեղործութեամբ
 կը պարապին: Սորա Զուղայու Ամենափրկչեան Ա-
 թոռոյ իրաւասութեան ներքոյ կը գտնուին: սակայն
 յայտնի չէ թէ նոյն Աթոռոյ կողմէն վերջին այցե-
 լութիւն կամ թղթակցութիւն կրր է եղած: Մերձ
 քառասուն տարւով յառաջ մէկ Տէր Յովհաննէս
 Մարկոսեան կողակ էր ստացել Քարօլ այցելելու
 համար: սակայն ճանապարհի զժուարութեան պատ-
 ճառաւ դնացել էր միայն մին: և Աֆղանստանի սահ-
 մանն և վերադարձել էր Հնդկաստան:

Քարօլի ժողովուրդն ու հայ եկեղեցին գրե-

Թէ բոլորովին մոռացուել էին երբ տաննւոյն տարւում յառաջ, երբ Անգղիացիք յաղթութեամբ Բարոյ մտան, մի Անգղիացի զօրապետ նշմարել էր Ս. Խաչի նշանն և եկեղեցին մոնելով բաւական տեղեկութիւն էր հաւաքել այդ եկեղեցւոյ և ժողովրդական մասին՝ զոր ժամանակին անգղիական թերթերում հրատարակել տուեց:


3. ՀԱՐՍՍՈՒԹԻՒՆ. — Ընդհանրաց գաղթականութիւն կը սկսի նոր Զուլայու հաստատութիւնէն յետ: Երբ Շահ Աբաս հայերին գերի տարաւ ի Պարսկաստան և նրանց Սպահանայ մօտերն հաստատեց, նրա մի նպատակն ևս այն էր որ հայերի պէս մի աշխուրջ և վաճառականութեան հմուտ ու աշխոյժ և աշխատասէր ժողովուրդ՝ իւր երկրի առևտուրն և արհեստներն զարգացնէ. և իրօք հայերն ևս այս նպատակին ծառայեցին, և քիչ միջոցում նոր Զուլայու Հայոց հարստութիւն առասպելական դարձաւ: Ինչպէս վկայ են հոյակապ ապարանքներն և եկեղեցիք, բաղանիք, վանքեր ևլն. որ մինչև ցայժմ կանգուն կը մնան, Հայք սկիզբն Աֆղանստանի ու Բէլուչստանի ճանապարհաւ Ընդհաստան մուտք գործեցին և իւրեանց գործունէութեան ասպարէզն մինչև հեռուոր Եւրոպայի գլխաւոր մայրաքաղաքներն, որպէս Աննետիկ, Ամստրդամ, Գէնովա, Հոտով ևլն. տարածեցին և ամէն տեղ մեծ անուն ու համբաւ ստացան իւրեանց հըմտութեան և աշխատասիրութեան համար: Աննետիկ Ս. Մարկոսի հրապարակի մէջ գոհարեղէն վաճառելու իրաւունքն միմիայն Ընդհանրաց վաճառականներին շնորհուած էր, մինչդեռ այդ հոշակաւոր հրապարակի վերայ որ և է առևտուր ի սկզբանէ անտի խտիւ արգելուած էր: Մինչև ցայսօր Ս. Մարկոսի եկեղեցւոյ գաւթի սիւների վրայ բազմաթիւ Զուլայեցի և հնդկաստանցի հայ վաճառականաց անուններ փորագրուած կը տեսնուին: Ամէն տեղ ուր որ գաղթել են Ընդհանրաց՝ իւրեանց ազգասիրութիւն և եկեղեցասիրութիւն ցոյց տուած են՝ եկեղեցի, տպագրատուն և ուր կարելի էր՝ դպրոց հաստատելով:

Իսկ Ընդհաստանի մէջ մինչև ներկայ դարու սկիզբներն հայ վաճառականներն առաջին տեղն ունէին, այնպէս որ Անգլիական կառավարութիւն որ սկսած էր արգէն իւր ազգեցութիւն և իշխանութիւն Հնդկաստանի վրայ ամրապնդել՝ պարտաւորուեցաւ. Հնդկահայոց այս բարձր դիրքն ծանաչել՝ տալով նորանց արքունի հրովարտակաւ Չինաստանի մետաքսեղինաց մեծանորհն, և քաղաքական գէպքերում հայերին իրրև եւրոպացի ճանաչելով եւրոպական իրաւունքներ տալով նորանց զորս մինչև ցայսօր վայելուած են:

Սակայն Ընդհաստանի արդի դրութիւն մի ցաւալի հակապատկեր է ներկայացնում՝ անցելոյն հետ բաղդատելով, Հին Ընդհանրաց մեծահարուստ վաճառականաց դաւակունք և թողուելք այժմ ըստ մեծի մասին կամ չքաւորութեան մէջ են կամ իւրեանց պապերից մնացած ժառանգութիւնն առանց արդիւնաւորելու՝ մտնում են: Ընկերից միայն Արգարեանց ընկերութիւնն է որ կարողացել է իւր գործն շարունակել մինչև ցայսօր, սակայն յիսուն վաթսուն տարուայ ընթացքում մի այնպիսի զգալի յառաջագիմութիւն չի արել, այլ միայն այդ տան հին անուն և պատիւ կարծողացել է մինչ ցարդ պահպանել: Այնպիսի առևտրական ընկերութիւնք որ յիսուն վաթսուն տարուով յառաջ Արգարեանց հետ որ և է կերպիւ բաղդատուելու արժանիքն և համարձակութիւնն չունէին, այժմ շատ աւելի բարձր և ճոխ դրութեան մէջ են: Իսկ մնացեալ հին մեծատունների ներկայացուցիչք՝ մի քանի աննշան առևտրականք և արհեստաւորք են, որք հաղիւ հազ կարողանում են իւրեանց շուայ ծախքերն հանել, Արգարե մի նոր սերունդ ևս կայ Ընդհաստանում՝ մեծաւ մասամբ Զուլայուց յետին ժամանակներ գաղթեալներ, որք փոքր ի շատէ առևտուրի և ուրիշ գործերում երևում են, բայց այլազգեաց բաղդատմամբ որ և է կանորութիւն չունին. նորանց ծախսերն օտարազգի մեծատանց հաւասար է, այլ արդիւնքն սորանցից յոյժ պակաս:

ՈՐ ԸՆԴՀԱՆՐԱՊՈՒՆ՝

ՅՈՐՈՍՍ ԶԱՎ. Ց. ՆՍԱՆԱԿԱՆ ԶՈՒՆԱՅԵՑԻ



Գ Լ Ի Ս Ի Մ .

(Շարունակութիւն)

—Անքան տեսայ որ Արթուր ասկիւն մէջ է. ցորս դին պատի պէս պատած է.— Օվանէս, ըսրց, ինց կիւնես, ինձի պարութ կիւլէ հասուր:

Օվանէսը գնըց օ մեր աղան ձինը հեծեր, փախեր է, տեսայ որ Արթուր թուրը ցլպղցոց, թուրը փառլամիս էղաւ, ևս էալ ըս դիուն քասեցի, թուրը փառլամիս էրի— օ, Արթուր, մի վախիր, Ընխորը հաւա օ ցորս սուարով (ձիւարով) տալիս հեծած, ամբուն թուր մի նետեցի, ցորս ձին էալ պարկեցուցի, մէկ մարդուն էալ գլխը կը յրեցի, տեսայ որ փասան կրէ.— հա պատամ օլասզ հա (տեսնամ զձեզ, սիրելի հայր լինեք): Ցի դիտէր օ ևս իմ, ընի գիտէ թէ թուրքեր Ղամբէրն է բանած, ցրսեր թէ հինգ հոգի թրես ընցուցեր իմ, անքան տեսայ օ Օվանէսը կիւլէն հասոց, ըսրց.— Մի վախէք,